

քերեր: Խոսքով այս խօսքերուն պատասխան չի տուաւ, եւ լռութիւն մը տիրեց մինչեւ Տիկինը իբր քունէ արթնցած:

— Խոսքով, գնա՛, յանգի՛ր, եթէ ես պէտք ունենամ քեզ կ'իմացնեմ,— ըսաւ. եւ երբ Խոսքով գնաց՝ մտաւ իւր սենեակին կից մատուռը աղօթելու:

Թերեւս բոլոր իւր տան մէջ այս արթուն կինը միայն ունէր սրամտութիւն գուշակելու համար փոթորիկը, որ պիտի Յասներ, եւ որովհետեւ մարդկանց վրայ յոյս չունէր, նամանաւանդ եւ յիրաւի կը կասկածէր ու կ'երկմտէր, ինկաւ աստուծոյ առջեւ ողբալու իր երկրին կորուստը:

Այս միջոցին Աշոտ իշխանը եւ իւր եղբարք Գուրգէն եւ Գրիգոր որսի, խաղերու, անառակութեանց եւ զուարճութեանց միայն զբաղեալ կին, եւ երբ պատահարն իմացան եւ պատանդներն տեսան, ոչ միայն իրենց մօր հոգերն ու կասկածները չունեցան, այլ ուրախութեամբ իրենց խրախճան ութիւնքն աւելցուցին: Իսկ Գուրգէնի գալուստը բոլորովին արհամարհեցին, տղայ տեսեր էին զինք եւ իրենց միտքը չէր կրնար համոզուի՞լ թէ տղայն երիտասարդ եւ մարդ էր դարձեր

Ի՛նչ մեծ տարբերութիւն այս աշխարհի տէր նախարարաց եւ խեղճ Յովնանու մէջ. լեռնցի մարդը նոյն միջոցին ժողուած իւր եղբայրները՝ արաքացուոց աւարեալ զենքերուն կը կը բթէր զիրենք եւ Մուշ գտնուած պաշարը չէր թողուր, որխառնիխումն անհետանայ, այլ Խոյթի անառիկ տեղուանքը պահպանել կ'ուտար, լեռան դիւրամատոյց գիւղերը ամրացնել կ'աշխատէր, եւ այս գործողութեանց մէջ ոչ իշխանական, ոչ հրամայական ձեւ չի կար իր քով, այլ ինք առաջինն էր իբրեւ մշակ գործելու եւ իր բարի օրինակը միայն կը պարտաւորէր ուրիշներն աշխատելու: